Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Կատարող՝ «Երևանի հ.25 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ», մեթոդիստ, Մարինե Գալստյան

Ղեկավար՝ մ.գ.թ.պ. Սվետլանա Մարության

ԵՐԵՎԱՆ- 2023

Բովանդակություն

Ներածություն ……3
Բաժին 1. Մանկավարժական աշխատողի հանագործակցության առանձնահատկությունները գործընկերների հետ ……6
1.1. Մանկավարժական աշխատողի և գործընկերների համագործակցության անհրաժեշտությունը՝ միտված ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը ……..6
1.2. ՆՈՒՀ-ի մեթոդիստի, դաստիարակի, երաժշտության դաստիարակի, ֆիզ հրահանգիչի համագործակցություններն ու միջոցները ……..8
Բաժին 2. Փորձարարական աշխատանք ……12
2.1. Փորձարարական աշխատանքի նպատակը, ընթացքը ……12
2.2. ՆՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների համագործակցությունը՝ ն/դ կրթության նորարարական մոտեցումների կիրառմամբ ……15
2.3. Փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծություն ……17
Եզրակացություն ……18
Գրականություն ……...19

Ներածություն

Անառարկելի է, որ մանկավարժական գործունեության արդյունքը երեխան է, նրա զարգացման աստիճանը, անձնային որակները, գերակա արժեքներն ու կողմնորոշումները: «Ոչ ոք պատահականորեն չի դառնում լավ մարդ» (Պլատոն):

Մանկավարժությունը որպես գիտություն ձևավորվել է XVII դարում չեխ հանրահայտ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու մանկավարժական գաղափարների և աշխատությունների շնորհիվ (3, 15-19): Մանկավարժի մասնագիտությունն ամենահին և պատվարժան մասնագիտություններից է: Մանկավարժական մտքի զարգացումն անցել է երկարատև ճանապարհ:

Որպես գիտություն նախադպրոցական մանկավարժությունը մեր երկրում սկսել է զարգանալ XX-րդ դարի 60-ական թվականներից: Անգնահատելի է մի շարք հայ մանկավարժների տեսական դրույթների և մանկավարժական գործունեության ներդրումը հայ մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման գործում (Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Գ. Էդիլյան, Ս. Արղության, Հ. Թումանյան, Ռաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան և այլք):

Մանկավարժական մասնագիտությունների շարքում իր ուրույն տեղն ունեցող նախադպրոցական կրթության հաստատությունների մանկավարժ-դաստիարակի՝ մեթոդիստի, գործունեությունն ուղղված անձի զարգացմանը (3, 8):

Մեր օրերում կրթական քաղաքականությունը լուրջ փոփոխություններ է ապրում, քանզի կրթական համակարգի որակական բարեփոխումը նոր մոտեցումներ է պահանջում:

Նոր դարը, նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ են դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Խոսքը ոչ միայն կրթության ոլորտում քանակական փոփոխությունների,

այսինքն՝ սաներին տրվող գիտելիքների ծավալը մեծացնելու, այլ նախ և առաջ որակական փոփոխությունների մասին է։

Գիտելիքներից բացի սանին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողունակություններ՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները։ Այս ամենը հնարավոր է մանկավարժական աշխատողների համակարգված փոխգործունեության արդյունքում։

Հետազոտության **նպատակը**. Ներկայացնել նախադպրոցական հաստատության մանկավարժի, դաստիարակի, երաժշտության դաստիարակի և ֆիզ հրահանգիչի համագործակցությունը նորարարական հեղինակային մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառմամբ։ Կատարված աշխատանքի արդյունքում ներկայացնել սաների ձեռքբերումները տարբեր ոլորտներում։

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնահարցի շուրջ եղած մասնագիտական գրականություն,
2. Ն/դ կրթության նորարարական մոտեցումների կիրառմամբ ապահովել մանկապարտեզի մեթոդիստի, երաժշտության դաստիարակի, ֆիզ հրահանգիչի, դաստիարակի փոխգործունեությունը։

Հետազոտության **կիրառելիությունը**. Ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու, մեթոդական աշխատանքը ճիշտ իրականացնելու, ծնողների շրջանում աշխատանքը ղեկավարելու, մեթոդ սենյակը հագեցնելու և այլ գործառույթներ իրականացնելու համար մեթոդիստի առջև դրված են նոր պահանջներ և խնդիրներ. կատարել արմատական փոփոխություններ, կիրառել նորարարական տեխնոլոգիաներ, մշակել և փորձարկել նոր մեթոդներ և հնարներ և այլն։

Այսօր նախադպրոցական համակարգում աշխատող մեթոդիստը պետք է ոչ միայն տիրապետի որոշակի հմտությունների ու կարողությունների, ունենա

գիտելիքներ, տիրապետի գիտահետազոտական գործիքակազմին, այլև իրականացնի կրթական ծառայություններ, կապ ստեղծի ընտանիքի հետ, դրսևորի հասարակական հետաքրքրություն, ապահովի կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաների բազմազանությունը, բարձրացնի մանկավարժական կադրերի մասնագիտական որակը, ահապովի կայուն մրցակցություն, յուրացնի մենեջմենթը և այլն. ժամանակակից նախադպրոցական հաստատությունն իրենից ներկայացնում է ճկուն, բազմաֆունկցիոնալ օղակ կրթական բոլոր հաստատությունների միջև (6, 11-19)։

Բաժին 1. Մանկավարժական աշխատողի հանագործակցության առանձնահատկությունները գործընկերների հետ

1.1. Մանկավարժական աշխատողի և գործընկերների համագործակցության անհրաժեշտությունը՝ միտված ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը

Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սանի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ի՞նչ կարող է նա անել։ Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

- ուսումնառության ընթացքում սանը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի.
- դաստիարակը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ սաների հետ մասնակցում է որոնողական աշխատանքներին։

Այսօր հսկայական նշանակություն է տրվում քննադատական մտածողությանը և «գիտելիքների կառուցողականությանը» (constructivism)։ Արդի գիտական ուսումնասիրությունները (1) հաստատում են, որ յուրաքանչյուր սան ունի գիտելիքների կառուցման միայն իրեն հատուկ ձևերն ու մեթոդները, որոնք պայմանավորված են անհատի, նրա ազգային, ռասսայական, տոհմային ծագումով, լեզվական, մշակութային, ինչպես նաև սեռային և ֆիզիկական առանձնահատկություններով։

Հովարդ Գարդները նշում է, որ կան երեխաներ, որոնց մոտ առավել զարգացած է այսպես կոչված տեսողական-տարածական մտածողությունը։ Կան երեխաներ, որոնք առավել լավ են ընկալում խոսքը, նրանց մոտ առավել զարգացած է այսպես

կոչված լեզվական մտածողությունը: Այլ երեխաների մոտ ավելի զարգացած է տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունը: Կան երեխաներ, որոնք ավելի լավ են ընկալում ակտիվ գործունեության մեջ ընդգրկվելիս, երբ շարժվում են, խաղում, ինչ-որ բան ստեղծում, կառուցում: Նրանց մոտ առավելապես զարգացած է մարմնաշարժողական մտածողությունը: Երաժշտությունն առավելապես լավ ընկալող երեխաների մոտ զարգացած է երաժշտական մտածողությունը: Շփվել, հաղորդակցվելով և համագործակցելով սովորել սիրող, խմբերով կամ ընկերոջ հետ աշխատել սիրող երեխաների մոտ առավել զարգացած է միջանձնային մտածողությունը: Եվ վերջապես կան երեխաներ, որոնք ինքնամփոփ են, դժվարանում են կիսել մտեքերը, զգացումքներն ու ապրումները: Նրանց մոտ զարգացած է ներանձնային մտածողությունը: Այսպիսով, Գարդները գտնում է, որ մարդուն հատուկ են մտածողության 7 ձև:

Ուսուցմանը ներկայացվող նոր պահանջները, բնականաբար, նաև նոր ձևերի, ուղիների և եղանակների որոնում են ենթադրում: Այդ որոնումների արդյունքում այսօր աշխարհում ուսուցման բազմապիսի մոդելներ են ձևավորվում:

Տարիների ընթացքում նախադպրոցական համակարգն անընդհատ նորացվել է ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, փոփոխվել են մեթոդիստի և դաստիարակների առջև դրված խնդիրները: Այսօր ժամանակակից հասարակությունը լուրջ պահանջներ է ներկայացնում նախադպրոցական կրթական հաստատության մեթոդիստին՝ նրանից ակնկալելով ստեղծագործական մոտեցում մանկավարժական գործընթացում, վերակառուցելու և մշտապես կատարելագործելու պատրաստակամություն, մանկավարժական վարպետություն և այլն:

1.2. ՆՈՒՀ-ի մեթոդիստի, դաստիարակի, երաժշտության դաստիարակի, ֆիզ հրահանգիչի համագործակցություններն ու միջոցները

Երեխաների կողմից ծրագրային նյութերի յուրացման աստիճանը բացահայտելու համար մանկապարտեզի մեթոդիստը տարին երկու անգամ դաստիարակների հետ անցկաց նում է մշտադիտարկում, տնօրենի հետ կազմում է տարեկան աշխատանքային պլան և հաշվետվություն, կազմում և ղեկավարում է բաց պարապմունքների և հանդեսների ծրագրեր: Միաժամանակ նա հետևում է մանկավարժական աշխատողների կրթությանը, մասնագիտական որակավորմանը, ինքնակրթությանը, տնօրենի հետ միասին անցկացնում է ներքին և արտաքին գնահատում և այլն (3):

Մեթոդիստը սետրտորեն համագործակվում է ֆիզ հրահանգիչի հետ: Ֆիզիկական դաստիարակության խնդիրները կարող են հաջողությամբ լուծվել միայն ամենօրյա նպատակային շարժողական ռեժիմի իրականացման պայմաններում: Դրանք ամենօրյա ֆիզկուլտ առողջարարական միջոցառումների, տարբեր ֆիզիկական վարժությունների, խաղերի կազմակերպումներն են, ինչպես նաև երեխաների ազատ, ինքնուրույն շարժողական գործունեութունը:

Պարապմունքների ընթացքում շարժումների ուսուցման և շարժողական հմտությունների զարգացման նպատակով կիրառվում են տարբեր մեթոդներ՝ զննական, խոսքային, խաղային, գործնական: Պարապմուքները կազմակերպվում են այնպես, որ դրանք երեխային ուրախություն պատճառեն, հետաքրքրություն առաջացնեն, ձևավորեն և զարգացնեն շարժողական ունակություններ և հմտություններ:

Պարապմունքի հիմնական մասում շարժումների ուսուցման ժամանակ ֆիզ հրահանգիչն անհատապես աշխատում է յուրաքանչյուր երեխայի հետ, ուղղում նրանց սխալները: Պարապմունքը պլանավորելիս շարժումներն ու վարժություններն ընտրում է երեխաների ֆիզիկական զարգացվածության աստիճանից, ֆիզիկական

պատրաստվածության ցուցանիշներից, մանկապարտեզի պայմաններից ելնելով։ Ֆիզկուլտուրայի պարապմունքներին երեխաների տրամադրությունը բարձրացնող գործոններից մեկը երաժշտությունն է։ Այն ուղեկցում է ներգրավիչ մասում, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ կատարելիս, շարժախաղեր խաղալիս։ Պարապմունքի վերջում օգնում է ազատվել հոգնածությունից։

Մանկապարտեզում անցկացվող ֆիզկուլտուրայի պարապմունքներում տարբեր ֆիզիկական վարժություններից բացի ֆիզ հրահանգիչը մեծ դեր է տալիս շարժախաղերի անցկացմանը, որի ընթացքում երեխաները դրսևորում են բարձր ակտիվություն։

Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով։ Խմբի դաստիարակի հետ համատեղ աշխատանքի միջոցով փորձում ենք հասնել նրան, որ երեխան տիրապետի գրական հայերենին, հաղորդակցվի տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորի խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին։ Երեխան, իր տարիքին համապատասխան, կարողանա պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչի առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծի։ Երեխան ունենա պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ։ Երեխան պետք է տիրապետի բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին։ Դաստիարակն աշխատում է այնպես, որ երեխան կարողանա կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատի, հետազոտի առարկաները և երևույթները, գտնի տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչի թվանշանները, տիրապետի նախաթվային և թվային հասկացություններին։ Երեխան պետք է կարողանա գնահատել գեղեցիկը։

Կերպարվեստի պարապմունքների ժամանակ դաստիարակի խնդիրն է սովորեցնել երեխաներին ճիշտ օգտվել ներկերից, ճիշտ բռնել մատիտը, վրձինը և հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը։

Նշանավոր մանկավարժ Ուշինսկին ասել է, որ երեխայի բնավորությունը պահանջում է դատողականություն։ Երեխան արագորեն յուրացնում է այն բառերն ու մտքերը, որոնք կապված են նկարների հետ։ Փորձենք երեխային բացատրել մի որևէ, թեկուզ մի շատ պարզ միտք։ Նա հեշտությամբ այն չի հասկանա։ Բայց նույն երևույթը պատմեք միատեսակ ընդունակություններն ունեցող երկու երեխայի, մեկին նկարով, մյուսին՝ առանց դրա և դուք կտեսնեք դրա նշանակությունը երեխայի համար։

Մեթոդիստի աշխատանքային գործընթացի կարևոր ուղղություններից մեկը երեխաների երաժշտական դաստիարակության վերահսկումն է։ Նախադպրոցականների երաժշտական մշակույթի զարգացումը նպատակաուղղված, համակարգված և ղեկավարվող գործընթաց է, որի նպատակն է զարգացնել նրանց երաժշտական գիտելիքները, կարողությունները, հմտությունները, երաժշտական ճաշակը, երաժշտության հուզական ընկալումը, գնահատումը։ Մանկապարտեզում այս գործընթացն իրականացնում է երաժշտության դաստիարակը (5), որի մարդկային, մասնագիտական որակները չափազանց կարևոր են։ Առաջին հերթին նա պետք է ունենա ընդհանուր և երաժշտական բարձր մշակույթ, երաժշտական ճաշակ, գնահատի և հասկանա երաժշտական դաստիարակության դերը երեխաների կյանքում։ Նա պետք է ըմբռնի ծրագրի «Երաժշտական դաստիարակություն» բաժնի նպատակներն ու խնդիրները, մեթոդները, երեխաների երաժշտական զարգացման հիմնական փուլերը, ընդունակությունները (2)։ Պիտի իմանա երաժշտական մշակույթի հիմքերը, կարողանա ճիշտ կողմնորոշվել երաժշտական գործունեություն իրականացնելիս, պարապմունքներ վարելիս հաշվի առնի երեխաների տարիքային առանձնահատկությունները և ցուցաբերի անհատական մոտեցում, ճիշտ գնահատի նրանց գեղագիտական ընդունակությունները, առանձնացնի հատուկ ուշադրության արժանի հարցերը և դրանք ներառի հեռանկարային և ամսական պլաններում (6)։

Երաժշտագեղարվեստական դաստիարակության ուղղությամբ ողջ աշխատանքի վերահսկումը տնօրենի և մեթոդիստի կարևոր գործառույթներից մեկն է։ Այդ աշխտանաքը նրանք սովորաբար իրականացնում են երկու ուղղությամբ.

1. Տնօրենի հետ ապահովում են նախադպրոցականների երաժշտական դաստիարակության ողջ գործընթացի վերահսկումը՝ ըստ ծրագրի պահանջների։
2. Երաժշտագեղարվեստական դաստիարակության աշխատանքները ճիշտ իրականացնելու համար ստեղծում են մանկավարժահոգեբանական բարենպաստ պայմաններ, ապահովում են տեխնիկական միջոցներով, անհրաժեշտ նյութերով, զարգացնող միջավայրով, համապատասխան մեթոդական և օժանդակ գրականությամբ (4, 248-250)։

Հաշվի առնելով երեխաների ուժեղ և թույլ կողմերը՝ մեթոդիստն ու երաժշտության դաստիարակը մշակում են նոր ձևեր, մեթոդներ, ծրագրեր, օգնում են դաստիարակներին պլանավորելու իրենց աշխատանքը, կազմակերպում են անհատական և խմբակային խորհրդատվություններ, սեմինար-պրակտիկումներ և այլն։ Երաժշտության դաստիարակը տարվա ընթացքում պլանավորում է ոչ միայն անհատական և խմբային խորհրդատվություններ, այլև զրույցներ ծնողների հետ։

Բաժին 2. Փորձարարական աշխատանք

2.1. Փորձարարական աշխատանքի նպատակը, ընթացքը

Փորձարարական աշխատանքի նպատակն է մանկապարտեզի մեթոդիստի, դատիարակի, երաժշտության դաստիարակի, ֆիզ հրահանգիչի համատեղ գործունեությամբ ապահովել երեխաների զարգացումն ու համակողմանի դաստիարակությունը: Հետազոտությունն իրականացվել է «Երևանի h25 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ»-ում:

Երաժշտության պարապմունքները մանկապարտեզում կրում են համալիր բնույթ: Մեկ պարապմունքի ընթացքում երեխաներն առնչվում են գործունեության բոլոր տեսակներին՝ երաժշտության ունկնդրում, երգի ուսուցում, երաժշտառիթմիկ շարժումներ՝ պարեր, խաղեր, նվագ՝ մանկական նվագարաններով: Այդ գործընթացում շատ կարևոր է նաև տեխնիկական հագեցվածությունը, սիստեմավորումը:

Մեր մանկապարտեզում փորձարկվել են Ն. Սահակյանի կողմից ստեղծած և մշակած «Տառերի ուրվագծման միջոցով երգի ունկնդրում և ուսուցում», «Թվերի ուրվագծման միջոցով երգի ունկնդրում և ուսուցում», «Երաժշտական փազլ» և այլ նորարարական մեթոդներ ու տեխնոլոգիաներ:

Մանկապարտեզի խմբի դաստիարակի և երաժշտության դաստիարակի համատեղ աշխատանքը մշտապես վերահսկվում է մեթոդիստի կողմից: Նա իրականացնում է պարապմունքների, տարբեր ռեժիմային պահերի դիտումներ, որոնց նպատակները տարբեր են: Օրինակ՝ հաճախ ներկա լինելով երաժշտական պարապմունքներին՝ նա ուսումնասիրում է, թե ինչպես են երեխաները տիրապետում երգեցողության կանոններին, երաժշտառիթմիկ շարժումներին կամ նվագարաններով նվագին, ինչպես են լուծվում բարոյական, մտավոր, ֆիզիկական դաստիարակության խնդիրները և այլն: Այս գործընթացում նաև օգնություն է ցուցաբերվում երաժշտության

դաստիարակին կամ խմբի դաստիարակին՝ աշխատանքի որակը բարելավելու նպատակով։

Տարեկան պլանին համապատասխան՝ մանկապարտեզի մեթոդիստը երաժշտության դաստիարակի, խմբի դաստիարակի և ծնողների հետ նաև կազմակերպում է տարաբնույթ աշխատանքներ, վերահսկում է դրանց կատարման գործընթացն ամբողջ տարվա ընթացքում։ Երաժշտության դաստիարակի հետ կատարված աշխատանքը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, խորհրդատվությունների, սեմինար պրակտիկումների ժամանակ։ Սեմինարների թեմաներն ու բովանդակությունն ընտրվում են պահի հրամայականին համապատասխան, անհրաժեշտ նյութին, հարցերին, երաժշտության դաստիարակի փորձառությանը համապատասխան (փորձի փոխանակման նպատակով)։ Դրանք կարող են շոշափել երաժշտառիթմիկ շարժումների, երգի ուսուցման, դիդակտիկ խաղերի, նվագախմբի, նորարարական տեխնոլոգիաների կիրառման, դիդակտիկ նյութերի ստեղծման հետ կապված թեմատիկ հարցեր։

Մեթոդիստը հետևում է, թե ինչպես է երաժշտության դաստիարակն աշխատում ծնողների հետ։ Այսպես, օրինակ, ավագ խմբում ունկնդրվեց «Երևանն աշնանը» թեմայով համակցված պարապմունքը, որն ամփոփվեց «Երգի ունկնդրումը, ուսուցումը նկարչության հետ զուգահեռ» նորարարական հեղինակային տեխնոլոգիայի կիրառմամբ (երաժշտության դաստիարակ և տեխնոլոգիայի հեղինակ՝ Ն. Սահակյան)։ Այդ ընթացքում հնչեց «Աշունը նկարիչ» (խոսքերի հեղինակ՝ Լ. Պողոսյան, երաժշտությունը՝ Ն. Սահակյանի) երգը։ Ծնողներն ու երեխաները կատարեցին առաջադրանքը. երգի յուրաքանչյուր տողին համապատասխան երկու թղթի վրա նկարել ստեղծագործության բովանդակությունը և համեմատել, թե ինչո'վ են այդ նկարները նման և տարբեր։ Նորարարական տեխնոլոգիայի կիրառման նպատակն էր ամփոփելով «Երևանն աշնանը» թեման տարբեր մեթոդիկաների համակցմամբ և ծնողների հետ համագործակցմամբ՝ ձևավորել այնպիսի կարողունակություններ, որոնք կապահովեն երեխաներից ակնկալվող վերջարդյունքները (2)։

Ուսումնադաստիարակչական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար մեր մանկապարտեզի մեթոդիստն ու տնօրենը փորձում են ետ չմնալ ժամանակակից թեորիաների զարգացման մակարդակից և երեխաների երաժշտական դաստիարակության մեթոդիկան իմանալով՝ ողջ մանկավարժական կոլեկտիվի աշխատանքն ուղղորդում են դրված նպատակների իրականացմանը, բացահայտում դաստիարակության նոր մեթոդներ, ստեղծագործական ձևեր, ներդնում են ժամանակակից դաստիարակության առաջավոր փորձը, երեխաների երաժշտական դաստիարակության համար ստեղծում անհրաժեշտ պայմաններ և ապահովում ժամանակակից տեխնոլոգիաներ։ Նրանք հոգում են, որ դաշնամուրը միշտ լինի լարված, առկա լինեն երաժշտական մանկական նվագարաններ, խաղալիքներ, երաժշտադիդակտիկ խաղեր, հագուստներ, տիկնիկային թատրոնի կերպարներ, համապատասխան երաժշտական, մեթոդական գրականություն, խմբերում ստեղծվեն երաժշտական անկյուններ, որոնք հասանելի լինեն երեխաներին, առկա լինեն երաժշտական կենտրոն, տնային կինոթատրոն և այլն։

Մեթոդիստի և երաժշտության դաստիարակի համագործակցությունն արդյունավետ դարձնելու նպատակով մեթոդիստը հաճախ ունկնդրում է երաժշտության պարապմունքները տարբեր տարիքային և կից խմբերում, դիտարկում է պարապմունքների տեսակները, համակարգը, կառուցվածքը, կիրառվող մեթոդներն ու հնարները, բազմազանությունը, երգացանկը, գործընթացի բարդացման աստիճանը, դինամիկան, կապն այլ մեթոդիկաների հետ, կիրառվող նորարարական տեխնոլոգիաները։ Նա ուսումնասիրում է նաև երեխաների զգացմունքային նախասիրությունները, հետաքրքրվածությունը, ակտիվությունը, ինքնուրույնությունը, զգացողությունը, ընդունակությունների, կարողությունների զարգացման մակարդակն ու աստիճանական աճը, պարապմունքի ծանրաբեռնվածությունը և այլն (1)։

2.2. ՆՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների համագործակցությունը՝ ն/դ կրթության նորարարական մոտեցումների կիրառմամբ

Դիտարկենք օրինակ։ Այս ուսումնական տարում ֆիզ հրահանգիչի ղեկավարությամբ կազմակերպվեց սպորտլանդիա 3 ավագ խմբերի երեխաների, ծնողների և դաստիարակների մասնակցությամբ։ Երեխաները մարզահրապարակ մտան քայլքի տարբեր ձևերի ցուցադրմամբ, դրոշներով, ժապավեններով, փոմփոլիկներով։ Վարժությունները կատարվեցին «Սպորտը մեր բարեկամն է» երգի (խոսք՝ Լ. Պողոսյանի, երաժշտությունը՝ Ն. Սահակյանի) ուղեկցությամբ։ Երբ երեխաների օրգանիզմը ֆիզիկապես պատրաստ էր, անցկացվեց մրցույթ թիմերի միջև։ Ծնողները նույնպես մասնակցում էին մրցույթին, ինչը ոգևորիչ ազդեցություն թողեց երեխաների կատարման վրա։ Թիմերի ավագները ողջույնի խոսք ասացին միմյանց։ Հայտարարվեց մրցույթի սկիզբը։

Մրցաձևեր.

1. վազք 30 մետր,
2. անցում օղակների միջով,
3. մրցույթ հեծանիվներով և ինքնագնացներով,
4. ձևիկի տեղափոխում գդալով,
5. ջրի տեղափոխում դույլերով։

Ավարտից հետո ժյուրիի նախագահն ամփոփեց արդյունքները։ Հաղթեց ընկերությունը։ Երեխաները գոհ էին և ուրախ։ Սպորտլանդիան ավարտվեց «Արաբկիր» երգով (խոսք՝ Լ. Պողոսյանի, երաժշտությունը՝ Ն. Սահակյանի)։

Մեկ այլ օրինակ, զբոսանքից վերադառնալուց հետո դաստիարակը հարցնում է, թե խոտն ի՞նչ գույն ուներ, ծառերի տերևներն ի՞նչ չափեր ու գույն ունեին։ Երեխաները պատմում են իրենց տպավորությունների մասին։ Նա թուղթ ու մատիտ է տալիս երեխաներին դրանք վերարտադրելու համար։

Դաստիարակը հետևում է, որ երեխան ճիշտ օգտագործի թուղթը: Կան երեխաներ, որոնք նկարում են թղթի անկյուններում, կենտրոնը թողնելով ազատ: Ոմանք էլ մի երեսի վրա նկարում են մի քանի պատկեր և դրանք խառնում իրար:

Շատերը մի քանի գիծ քաշելուց հետո փոխում են թուղթը: Նույնը կրկնում են մնացած էջերի վրա: Նա պահանջում է, որ երեխան նկարի թղթի կենտրոնում և վերարտադրի մեկ նկար: Երբ երեխան մեկ կամ երկու գիծ է քաշում և փոխում է թուղթը, նա իր սխալը որոնում է գծի մեջ: Դաստիարակը երեխային բացատրում է, որ մեկ կամ երկու գծով հնարավոր չէ ստանալ լրիվ պատկեր: Եվ կան շատ երեխաներ, որ նկարելուց հետո պատռում են նկարը: Դրա համար դաստիարակը պահանջում է, որ ծնողները ուշադիր լինեն և խորանան իրենց երեխաների զբաղունքի իմաստի մեջ: Գծելիս ուշադրություն են դարձնում, որ երեխան ոչ թե ամբողջ թևը շարժի, այլ ձեռքի դաստակը:

Երեխան ավելի շատ հակված է ներկել գույներով: Ուստի նրան անհրաժեշտ է ծանոթացնել գույների հետ: Օրինակ դաստիարակը վերցնում է կարմիր գույնի գնդակ, այդ գույնի մատիտը քսում թղթի վրա: Այդպիսով նրան ծանթացնում է կարմի գույնին: Դրանց անունները կրկնում է այնպես, որ որևէ գույն տեսնելիս երեխան անմիջապես ճանաչի այն: Այդ ձևով սովորեցնում է նաև մյուս գույները:

Տարների փորձը ցույց է տվել, որ նախադպրոցական տարիքի երեխաները շատ անմիջական են առավել վառ գույների նկատմամբ: Պարապմունքի ժամանակ դաստիարակը հանձնարարում է նկարել արև: Երեխաները նկարում են արև՝ շեշտելով ճառագայթները: Երեխաներից մեկն արևը պատկերում է վառ դեղին, մյուսը կարմիր, երրորդը՝ նարնջագույն: Հետևությունն այն է, որ պայծառ օրերին երեխաները զբոսնում են բնության գրկում, ամենից անմիջականը, որն ազդում է մարդու վրա արևն է, նրա լույսն ու ջերմությունը: Երեխաները սիրով արև են նկարում: Չէ՞ որ երեխաներն աշխարհն ընկալում են գույներով:

Նկարելուց առաջ դաստիարակը երեխային ստիպում է, որ դիտի զննողաբար՝ ընկալի տերևի ձևամասնությունները և ապա վերարտադրի: Մինչև երեխան չվարժվի

այդպիսի գործողությանը, չի կարող նկարել: Դաստիարակը հետևում է, որ երեխան շուտ-շուտ նայի բնօրինակին: Դրանք երեխայի մոտ զարգացնում են դիտելու, առարկաները բնական վիճակում ընկալելու կարողություն: Վերջում քննարկում են, թե որ տերևն է ավելի գեղեցիկ և ինչու: Համեմատում են տերևները:

2.3. Փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծություն

Թեմատիկ աշխատանքների ուսումնասիրության ժամանակ (հանդեսներ, բաց պարապմունքներ, ինտեգրված պարապմունքներ և այլն) գնահատվում է երեխաների գործունեությունը, երաժշտության դաստիարակի և խմբի դաստիարակի, ինչպես և նրանց մեթոդիստի հետ համատեղ աշխատանքը:

Երեխաների գործունեությունը պարապմունքի ժամանակ գնահատվում է ըստ նրանց հետաքրքրասիրությունների, կատարողականության աստիճանի, տրամադրության, հուզականության, ծանրաբեռնվածության բացակայության, ոգևորության, ամբողջ խմբի ներգրավվածության աստիճանի՝ ըստ յուրաքանչյուրի հնարավորությունների և ընդունակությունների:

Խմբի դաստիարակի և երեխաների համատեղ աշխատանքը գնահատվում է պարապմունքի մեջ ըստ երեխաների ինտեգրման, հետաքրքրության, ընտրված երգերի համապատասխանության, անցկացվող զրույցի և երեխաներին ներգրավելու, հրապուրելու կարողության, ըստ խոսքի տոնի, բարյացակամ վերաբերմունքի, արտահայտչականության, հնարամտության, համատեղ, ճիշտ աշխատանքի և այլն:

Վերլուծելով կատարված աշխատանքները՝ մանկապարտեզի մեթոդիստը ցուցաբերում է համապատասխան մեթոդական և կազմակերպական օգնություն: Աշխատանքը համակարգելու համար նա օգտագործում է իր և երաժշտության դաստիարակի հմտությունները, փորձը, դաստիարակների հետ իրականացվող աշխատանքը համատեղելու, կարգավորելու ունակությունը՝ համակարգելով մանկավարժական կոլեկտիվի և ծնողների աշխատանքը:

Եզրակացություն

Ելնելով ներկայիս լուրջ փոփոխություններից, տարբեր մոտեցումներից, գաղափարներից, արդեն կյանքի կոչված ծրագրերից ու խնդիրներից՝ դաստիարակության և ուսուցման հիմքում պետք է դրված լինի մեր ազգային հայեցակարգը. այն է՝ երեխաներին տալ լիարժեք գիտելիքներ, և' հոգեպես, և' ֆիզիկապես նախապատրաստել դպրոցին։

Երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացի հիմքում պետք է դրվի մի կարևորագույն խնդիր. մենք երեխային չպետք է ստիպենք սովորել. հարկավոր է օգնել նրան մտածել ինքնուրույն, և եզրահանգումներ կատարել՝ ելնելով իր կենսափորձից։

Երբ ուսումնասիրում ենք նախադպրոցականների ունակությունները համոզվում ենք, որ այդ տարիքում նրանք արդեն որոշ չափով նկարիչ են, դերասան և ասմունքող և այլն։ Ծնողի և դաստիարակի խելացի, գործիմաց վերաբերմունքը մեծապես կօգնի այդ ունակությունների զարգացմանը։ Հակառակ դեպքում նույնիսկ բուռն դրսևորվող տաղանդը կարող է անհետանալ, խամրել։ Այստեղ առանձնապես մեծ դեր ունեն ծնողները։ Վերջին հաշվով ընտանիքն է երեխայի դաստիարակության առաջին օղակը։

Դաստիարակի, երաժշտության դաստիարակի, ֆիզ հրահանգիչի և մեթոդիստի համատեղ աշխատանքը տալիս է ցանկալի արդյունքներ երեխաների ընդհանուր դաստիարակության խնդիրները լուծելու գործում։

Գրականություն

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա. և ուրշներ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Ոսկան Երևանցի, 2001

2. Գալստյան Մ., Սահակյան Ն., Մանկապարտեզի մեթոդիստի եւ երաժշտության դաստիարակի համատեղ աշխատանքը որպես նախադպրոցականների գեղագիտական // Մանկավարժական Միտք հանդես.- Հատոր 1-2, 2023

3. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008։

4. Методика музыкального воспитания в детском саду: «Дошк. воспитание»/ Н.А. Ветлугина, И.Л. Дзержинская, Л.Н. Комиссарова и др.; Под ред. Н.А. Ветлугиной. – 3-е изд., испр. и доп. – М.: Просвещение, 1989. – 270 с.

5. Л. В. Попова, Методическая работа в дошкольной образовательной организации, Киров 2020.

6.https://studme.org/319014/pedagogika/deyatelnost_pedagogicheskogo_kollektiva_muzykalnomu_vospitaniyu_detey.